



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍՏԻՂԵԱՑԻ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՑԱԿ

Helsinki Citizens' Assembly-Vanadzor



Open Society Foundations - Armenia

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

## ԶԵԿՈՒՅՑ

2015 թ. ձմեռային և 2016 թ. ամառային գորակոչերի  
ընթացքում գորակոչիկների իրավունքների  
վիճակի մասին

ՎԱՆԱԶՈՐ

2016



Ջեկույցի հեղինակ՝ Արմինե Սադիկյան  
Տվյալների ամփոփում՝ Հասմիկ Կարապետյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներին են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

## Բովանդակություն

Ներածություն .....	2
Կիրառված մեթոդալոգիան .....	3
Զորակոչի գործընթացը, նախագորակոչային տարիքի անձանց և գորակոչիկների առողջական վիճակի գնությունը կարգավորող օրենսդրությունը և իրավական դաշտի թերությունները զինձառայությանը պիտանիության հարցի կարգավորման շրջանակում.....	4
Զորակոչի ընթացքում ծագած հարցերի վերաբերյալ հանձնաժողովների գործողությունների (անգործության) բողոքարկումը.....	13
2015 թ-ի ձմեռային և 2016 թ. ամառային գորակոչերի ընթացքում գորակոչիկների իրավունքների վիճակի և կազմակերպության կողմից արձանագրած խնդիրների մասին .....	15
Առաջարկություններ .....	26
Հավելված .....	28



## Ներածություն

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից ներկայացվում են 2015 թ-ի ձմեռային (2015 թ. դեկտեմբեր - 2016 թ-ի հունվար-փետրվար) և 2016 թ-ի ամառային (մայիս-հուլիս ամիսներ) գորակոչերի ժամանակահատվածում արձանագրված մարդու իրավունքների խախտումները, օրենսդրական բացերը, օրենսդրության կիրառման խնդիրները:

Զեկույցում ամփոփված տեղեկությունները ստացվել են ՀՀ տարբեր մարզերի բնակավայրերի, մասնավորապես Լոռու, Գեղարքունիքի, Արարատի, Արագածոտնի, Կոտայքի մարզերի, Երևան քաղաքի և արտերկրից կազմակերպություն դիմած 57 քաղաքացիներից՝ գորակոչիկներից և նրանց հարազատներից, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարությունից կազմակերպության հարցումների պատասխանների միջոցով: Համեմատության համար նշենք, որ նախորդ նույն ժամանակահատվածի ընթացքում դիմած քաղաքացիների թիվը 45 է:

Զեկույցում վերստին ներկայացրել ենք բազմիցս բարձրաձայնված և մասամբ լուծված կամ լուծում չստացած համակարգային խնդիրները և գորակոչիկների իրավունքների խախտմանը հանգեցնող կոնկրետ խնդիրները, ինչպես նաև այս գորակոչերի ժամանակ արձանագրված խնդիրները:

Անդրադարձել ենք նաև գորակոչը և զինվորական ծառայության պիտանիության հարցը կարգավորող օրենսդրությանը և գնահատել ենք թերությունների, բացերի ազդեցությունը գորակոչիկների իրավունքների խախտման վրա:



## Կիրառված մեթոդոլոգիան

Զեկույցում ներկայացված տեղեկատվության աղբյուրներն են.

1. գորակոչիկները և նրանց հարազատների հաղորդած տվյալները
2. գորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ բժշկական փաստաթղթերը
3. ՀՀ պաշտպանական գերատեսչության կողմից ստացված գրությունները
4. զանգվածային լրատվության միջոցներով տարածված տեղեկությունները
5. ՀՀ օրենսդրությունը

Կազմակերպություն դիմած գորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ բժշկական փաստաթղթերն ուսումնասիրվել են բժիշկ-փորձագետի կողմից, որի եզրակացության հիման վրա կազմվել են ՀՀ պաշտպանության նախարարությանը հասցեագրվող գրությունները: Համեմատվել են առողջության վերաբերյալ բժշկական հանձնաժողովների կողմից գորակոչիկի առողջության վերաբերյալ տրամադրված եզրակացությունները քաղաքացիական բժշկական հաստատությունների կողմից տրված փաստաթղթերի և ծնողների կողմից հաղորդված տվյալների հետ:

Զորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ տվյալները դիտարկվել են ըստ 2013 թվականի հունիսի 11-ի ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 410 Հրամանով սահմանված հիվանդությունների ցանկի և գնահատվել է զինծառայությանը գորակոչիկի պիտանիությունը՝ համաձայն Հրամանով սահմանված կարգում ամրագրված չափանիշների:

**Ձորակոչի գործընթացը, նախագորակոչային տարիքի անձանց և  
գորակոչիկների առողջական վիճակի զննությունը կարգավորող  
օրենսդրությունը և իրավական դաշտի թերությունները  
զինձառայությանը պիտանիության հարցի կարգավորման  
շրջանակում**

Ձորակոչի գործընթացը և գորակոչիկների բժշկական զննության անցկացումը կարգավորող նորմերը ամրագրված են հետևյալ իրավական ակտերում:

- **«Զինապարտության մասին» ՀՀ օրենք**.<sup>1</sup> ընդունվել է 1996 թ. սեպտեմբերի 16-ին: Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների զինվորական հաշվառումը, զինվորական ծառայության նախապատրաստությունը, պարտադիր զինվորական ծառայության գորակոչը, զինվորական ծառայությունը, պահեստագործում պատրաստությունը կազմակերպելու և անցկացնելու հետ կապված հարաբերությունները, սահմանում է բժշկական զննության անցկացումը կարգավորող նորմերը, պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ազատման և տարկետում ստանալու հիմքերը:

Հարկ է նշել, որ 2014 թ-ին մշակվել և նույն թվականի հոկտեմբեր ամսին ՀՀ կառավարությանն է ներկայացվել «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով պետք է կարգավորվի ՀՀ Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու ՀՀ քաղաքացիների պարտավորությունը: Նախագիծը դեռևս հաստատված չէ կառավարության կողմից:

Ինչպես նշվեց, «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 3-րդ գլուխը սահմանում է քաղաքացիների զինվորական ծառայության նախապատրաստությունը, որի 7-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ բժշկական քննությունը պարտադիր անցկացնում են զինվորական կոմիսարիատների հանձնաժողովների բժիշկ մասնագետները՝ զինապարտների կցագրման, գորակոչի, զինվորական ծառայության անցնելու և վարժական հավաքի կանչվելու ժամանակ: Եթե տեղում հնարավոր չէ

<sup>1</sup> <http://www.arlis.am/>

ստանալ քաղաքացու՝ զինվորական ծառայությանը պիտանի լինելու մասին բժշկական եզրակացություն, ապա տեղական գորակոչային հանձնաժողովը պարտավոր է նրան ուղարկել համապատասխան բժշկական հիմնարկ՝ բուժհետազոտում անցկացնելու, իսկ անհրաժեշտության դեպքում նաև բուժում իրականացնելու համար: Այդ բժշկական հիմնարկների ցանկը հաստատում է կառավարությունը: Նշված դեպքերում զինապարտների բժշկական զննությունը և հետազոտումը կատարվում է առաջնահերթ և անվճար:<sup>2</sup>

Օրենքի 15-րդ հոդվածը սահմանում է առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու կարգը: Հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող գորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու և պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի գորակոչիկներին գորակոչից տարկետում տալու ժամկետները և կարգը:

Հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված տարկետումներ տալու մասին որոշումներն ընդունում է հանրապետական գորակոչային հանձնաժողովը՝ ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծված կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Զորակոչիկների բժշկական քննությունը ըստ սույն օրենքի կազմակերպում է տեղական գորակոչային հանձնաժողովը և ի թիվս այլ գործառույթների տեղական գորակոչային հանձնաժողովը որոշումներ են ընդունում գորակոչի և գորակոչիկներին՝ ըստ գորատեսակների զինված ուժերում և այլ զորքերում զինվորական ծառայության ուղարկելու մասին, ընտանեկան դրության բերումով և ուսումը շարունակելու համար տարկետում տալու վերաբերյալ:

Տեղական գորակոչային հանձնաժողովի որոշման հետ համաձայն չլինելու դեպքում այն կարող է բողոքարկվել հանրապետական գորակոչային հանձնաժողով (Օրենքի 18-րդ հոդված):

<sup>2</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=91500>

Գանգատների վերաբերյալ որոշումները հանրապետական գորակոչային հանձնաժողովն ընդունում է մեկամսյա ժամկետում՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

Հանրապետական գորակոչային հանձնաժողովի որոշումները, դրանց ընդունման օրվանից մեկամսյա ժամկետում, կարող են գանգատարկվել դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ գորակոչային հանձնաժողովների որոշումներն ընդունվում են Կենտրոնական բժշկական հանձնաժողովի (այսուհետ՝ ԿԲՀ) եզրակացության հիման վրա:

- **ՀՀ կառավարության 10 հուլիսի 2008 թվականի N 748-Ն որոշմամբ<sup>3</sup>** հաստատված կարգի համաձայն, բժշկական հսկողության և հաշվառման ենթակա են նախագորակոչային (16-18 տարեկան), գորակոչային (18-27 տարեկան), ինչպես նաև 27 տարեկանից հետո ասպիրանտուրան ավարտած՝ զինվորական ծառայություն չանցած արական սեռի բոլոր քաղաքացիները: Նախագորակոչային տարիքի անձինք, ըստ տարածաշրջանային զինվորական կոմիսարիատներից ներկայացված՝ կցագրման ենթակա անձանց անվանացանկի, բժշկական հաշվառման են վերցվում ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների (բուժմիավորումների ամբուլատոր-պոլիկլինիկական ստորաբաժանումների)՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանի համաձայն՝ տվյալ տարիքի անձանց բուժսպասարկման համար առանձնացված առաջնային օղակի մասնագետի կողմից:

Նախագորակոչիկների ու գորակոչիկների բուժսպասարկման համար առանձնացված առաջնային օղակի մասնագետն իր կողմից հաշվառման վերցված քաղաքացիների պարբերական բժշկական հետազոտությունն իրականացնում է համաձայն պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման առողջապահական պետական նպատակային ամենամյա ծրագրերին

<sup>3</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100207>



համապատասխան կատարվող բժշկական հետազոտությունների և հիվանդների բուժման ծավալների:

Հայաստանի Հանրապետության մարզերում բնակվող նախագորակոչային ու գորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների հիվանդանոցային բուժումը կազմակերպվում է ըստ բնակության վայրի՝ որևէ հիվանդանոցում, իսկ նեղ մասնագիտացված բուժօգնություն պահանջող հիվանդությունների դեպքում՝ Երևան քաղաքի համապատասխան բժշկական հաստատություններում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ընտրությամբ: Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման առողջապահական պետական նպատակային ամենամյա ծրագրերին համապատասխան՝ նախագորակոչային ու գորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների անվճար հիվանդանոցային բուժման համար հիմք է հանդիսանում զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի կողմից տրված և զինվորական կոմիսարի կնիքով հաստատված ուղեգիրը:

- **«Պաշտպանության մասին» ՀՀ օրենք**.<sup>4</sup> ընդունվել է 2008 թ. նոյեմբերի 27-ին:  
Համաձայն սույն օրենքի 13-րդ հոդվածի՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հաստատում է պարտադիր զինվորական ծառայության գորակոչի և վարժական հավաքների անցկացման, զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգերը: Համաձայն օրենքի 14-րդ հոդվածի՝ զինված ուժերի գլխավոր շտաբն իրականացնում է պարտադիր զինվորական ծառայության, գորակոչի և վարժական հավաքների անցկացումը, ինչպես նաև գորահավաքային ռեսուրսների հաշվառումը և հավաքագրումը, իրականացնում է քաղաքացիների զինվորական ծառայության նախապատրաստությունը և զինվորական հաշվառումը:
- **2013 թվականի հունիսի 11-ի ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 410 հրամանը** զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը

<sup>4</sup> Տե՛ս նույն աղբյուրը

հաստատելու և ՀՀ ՊՆ 2010 թվականի փետրվարի 26-ի թիվ 175-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին /այսուհետ՝ ՀՀ ՊՆ 410 հրաման/:

ՀՀ ՊՆ 410 հրամանով սահմանվում են.

- քաղաքացիների բժշկական փորձաքննության անցկացման կարգը՝ նրանց գորակոչային տեղամասերին կցագրելու և պարտադիր զինվորական ծառայության գորակոչելու ժամանակ,
- հիվանդությունների և ֆիզիկական թերությունների ցանկը, որոնց հիման վրա որոշվում է կցագրման, գորակոչի, զինվորական ծառայության անցնելու, վարժական հավաքների, հրամանատարային կամ շտաբային զինվորական վարժանքների և գորավարժությունների (գորախաղերի) ժամանակ քաղաքացիների պիտանիությունը զինվորական ծառայությանը՝ ըստ նրանց առողջական վիճակի և ֆիզիկական տվյալների:

Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ ՀՀ առողջապահության նախարարի առաջարկության հիման վրա ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով՝ 2014 թ-ին նախատեսվել է լրամշակել ՀՀ ՊՆ 410 հրամանով հաստատված զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը, որի համար ստեղծվել է աշխատանքային խումբ:

Ինչպես բազմիցս անդրադարձել ենք նախորդ զեկույցներում<sup>5</sup>, մինչ 2014 թ-ը որևէ իրավական ակտով, ինչպես նախկին հրամաններով, այնպես էլ վերջին՝ ՀՀ ՊՆ թիվ 410 հրամանով, սահմանված չէր շարային, ոչ շարային (որը վերջին հրամանով այլևս կիրառելի չէ) և սահմանափակումներով զինվորական ծառայության շրջանակը և ծավալը: Իսկ շարային և «ոչ շարային» ծառայությունը կարգավորող նորմատիվ ակտի գոյության վերաբերյալ մեր հարցումներին ՀՀ ՊՆ-ն նախկինում տրամադրել էր իրարամերժ պատասխաններ:<sup>6</sup>

<sup>5</sup> [http://hcav.am/wp-content/uploads/2014/11/%D5%A6%D5%B8%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D5%B9\\_2013-2014\\_%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf](http://hcav.am/wp-content/uploads/2014/11/%D5%A6%D5%B8%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D5%B9_2013-2014_%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf)

<sup>6</sup> ԶԵԿՈՒԻՅՑ 2013 թ. գարնանային գորակոչի ընթացքում գորակոչի գործընթացի և գորակոչիկների իրավունքների վիճակի մասին, էջ 4-5, ՀԱՎԵԼՎԱԾ 1.1-1.5



Կազմակերպության կողմից 2014 թ-ի հոկտեմբերի 23-ին ՀՀ ՊՆ հասցեագրված գրությանն ի պատասխան 2014 թ-ի նոյեմբերի 25-ի գրությամբ ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետը հայտնել է, որ ՀՀ ՊՆ թիվ 410 հրամանով գործողության դրված «Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգի» համաձայն՝ զինծառայությանը պիտանիության հոդվածներով ՀՀ ԶՈՒ Ժամկետային պարտադիր զինծառայողներին հաստիքների նշանակման հակացուցումները որոշելու, ՀՀ ԶՈւ զինծառայողներին բուժական ֆիզկուլտուրային խմբերում ընդգրկելու և թույլատրվող վարժությունների ցանկը սահմանելու նպատակով ՀՀ ԶՈւ գլխավոր շտաբի պետի 2014 թ. հունվարի 15-ի գաղտնի հրամանով գործողության է դրվել ձեռնարկ, որով հաստատվել են զինվորական ծառայության սահմանափակումների բնութագիրը, թույլատրվող ֆիզիկական վարժությունների ցանկը, ինչպես նաև զինծառայողներին պաշտոնների նշանակման սահմանափակումները: Գրության մեջ նշվում է, որ ձեռնարկը մշակվել է ՀՀ ԶՈւ ռազմաբժշկական, մարտական պատրաստության, ԶՈւ ԳՇ կազմգործակալաբաշխային վարչությունների մասնագետների և ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի փորձագետների կողմից: Ըստ գրության մեջ ներկայացված տեղեկատվության՝ ձեռնարկում սահմանված են նաև խաղաղ պայմաններում զինվորական ծառայությանը պիտանիության սահմանափակումներով ժամկետային զինծառայողներին մարտական հերթապահությունում ընդգրկման կարգը, բարձր լեռնային կլիմայական գոտիներում ծառայության հակացուցումները, ինչպես նաև ֆիզիկական պատրաստության սահմանափակումները՝ համաձայն «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգի»:

Այսպիսով, շարային և սահմանափակումներով զինծառայությունը կարգավորող, ինչպես նաև թույլատրելի գործողություններ իրականացնելու ցանկը սահմանելու գաղտնի հրամանը, որով սահմանվում են սահմանափակումներով ծառայության զինծառայողների իրավունքները, պարտականությունները, մատչելի չէ գորակոչիկներին և նրանց հարազատներին: Այս հարցի կարգավորումը մշտապես

կարևորվում է կազմակերպության կողմից, քանի որ ինչպես վկայում են քաղաքացիները, որոնք ճանաչվել են «շարային՝ սահմանափակումներով» ծառայությանը, իրականում գտնվել և գտնվում են շարային ծառայության մեջ՝ ներառյալ մարտական հերթապահությունում ընդգրկվելը, որը հանգեցնում է ոչ միայն նրանց առողջական վիճակի վատթարացմանը, այլև զինվորական պարտականությունների ոչ պատշաճ կատարմանը, կանոնադրային հարաբերությունների խախտմանը, իսկ առանձին դեպքերում նույնիսկ զինծառայողի մահվանը:

ՀՀ ՊՆ 410-հրամանով հստակ սահմանված չեն նաև մի շարք հիվանդությունների ծանրության աստիճանների չափանիշները, ինչի հետևանքով նույն ծանրությամբ հիվանդությունը կարող է դիտարկվել որպես թե՛ ծառայությունից ազատման, թե՛ ծառայությանը պիտանի ճանաչելու հիմք: Այս մասին բազմիցս բարձրաձայնվել է, քանի որ գտնում ենք, որ իրավական նորմերի նման անհստակությունը հանդիսանում է իրավական որոշակիության սկզբունքի խախտում և կարող է հանդիսանալ և հանդիսանում է սուբյեկտիվ, հայեցողական մոտեցումների և կոռուպցիոն ռիսկերի դրսևորումների պատճառ:

Այսպիսով, ՀՀ ՊՆ 410 հրամանը բովանդակային առումով իրականում հանգեցնում է զորակոչիկների իրավունքների խախտմանը և զինվորական ծառայությանը նրանց պիտանիության վերաբերյալ որոշումների ընտրողական ընդունմանը:

ՀՀ ՊՆ 410 հրամանով սահմանված չէ մի քանի հիվանդությունների առկայության պայմաններում զինվորական ծառայությանը պիտանիության հարցը, չնայած կազմակերպության կողմից պարբերաբար բարձրաձայնվել են կարգավորման բացակայության հետևանքների մասին և բերվել են կոնկրետ զորակոչիկների իրավունքների խախտման օրինակներ: Այս առումով ՀՀ պաշտպանության նախարարությունը պատճառաբանում է. «մի քանի հոդվածով սահմանափակում ունեցող զորակոչիկի պիտանիության աստիճանը հնարավոր չէ համակցել և տալ մեկ ընդհանուր եզրակացություն, քանի որ յուրաքանչյուր հիվանդություն տալիս է որոշակի սահմանափակում ծառայողական պարտականությունները կատարելիս,

որն իրականացվում է զորամասի հրամանատարության և բուժճառայության պետի հսկողությամբ»:<sup>7</sup> Միասնական մոտեցումների և օրենսդրական կարգավորման բացակայությունը հանգեցնում է նույն օրենսդրության կիրառման ընթացքում տարբերակված մոտեցմանը և ոչ միատեսակ վարչարարությանը, որն էլ իր հերթին հանգեցնում է զորակոչիկների և զինճառայողների իրավունքների շարունակական խախտումներին:

Հրամանով նաև սահմանվում է Կենտրոնական բժշկական հանձնաժողովի գործառույթները, այն է.

1) բժշկական փորձաքննության ենթարկել զինկոմիսարիատներում նախնական բժշկական հետազոտում և փորձաքննություն անցած զորակոչիկներին,

2) նախագորակոչային և զորակոչային տարիքի անձանց բժշկական փորձաքննության աշխատանքներում գործնական և մեթոդական օգնություն ցուցաբերել զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներին,

3) նախագորակոչային և զորակոչային տարիքի անձանց հետազոտման և բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համագործակցել առողջապահական մարմինների հետ,

4) զորակոչիկների առողջական վիճակի մասին գրավոր եզրակացություն ներկայացնել, եթե նրանք.

ա. պիտանի են ճանաչվել զինվորական ծառայությանը (կամ պիտանի զինվորական ծառայության՝ սահմանափակումով),

բ. տարկետում են ստացել առողջական վիճակի պատճառով՝ բուժման նպատակով,

գ. ժամանակավորապես ոչ պիտանի են ճանաչվել առողջական վիճակի պատճառով՝ պարտադիր զինվորական ծառայության համար,

դ. ոչ պիտանի են խաղաղ ժամանակ զինճառայության համար,

ե. ոչ պիտանի են ճանաչվել զինճառայության համար՝ հանելով զինվորական հաշվառումից,

<sup>7</sup> [http://hcav.am/wp-content/uploads/2014/10/M\\_2014-04.06\\_202-1.pdf](http://hcav.am/wp-content/uploads/2014/10/M_2014-04.06_202-1.pdf)

5) վերահսկել զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովների գործունեությունը,

6) անհրաժեշտության դեպքում վերանայել նախկինում ընդունած իր որոշումները,

7) ՀՀ գորակոչային հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել ԿԲՀ-ի եզրակացությունները՝ գորակոչից հետո 20-օրյա ժամկետում:

Ըստ նշված հրամանի, **գորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ ԿԲՀ-ի եզրակացությունները վերջնական են** և հաստատվում են ՀՀ գորակոչային հանձնաժողովի կողմից:

### **Զորակոչի ընթացքում ծագած հարցերի վերաբերյալ հանձնաժողովների գործողությունների (անգործության) բողոքարկումը**

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների (անգործության) վերաբերյալ բողոքարկման իրավունքը համարվում է սահմանադրական իրավունք: Այսինքն, տվյալ իրավունքը ապահովված է, և երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ: ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:<sup>8</sup> Սահմանադրական տվյալ նորմը պետական բոլոր մարմիններին, այդ թվում գորակոչային հանձնաժողովներին պարտավորեցնում է գործել Սահմանադրությամբ կամ օրենքներով նախատեսված լիազորությունների շրջանակներում: Նման լիազորություններից դուրս գործողություն (անգործության) իրականացնելու դեպքում անձն ունի իր խախտված իրավունքների արդյունավետ պաշտպանության իրավունք: ՀՀ Սահմանադրության 61 հոդվածի համաձայն «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»: ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և

<sup>8</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>

անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:<sup>9</sup>

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն, վարչական մարմիններ են համարվում Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Տվյալ նորմի իմաստով գորակոչային գործընթացը իրականացնում են հետևյալ վարչական մարմինները՝

- Տեղական գորակոչային հանձնաժողովները,
- Մարզային գորակոչային հանձնաժողովները,
- Հանրապետական գորակոչային հանձնաժողովը,

Տեղական կամ մարզային (Երևանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովի որոշման վերաբերյալ գորակոչիկի կամ այլ անձանց գանգատը, մինչև դրա վերանայումը, չի կասեցնում որոշման կատարումը: Գանգատների վերաբերյալ որոշումները Հանրապետական գորակոչային հանձնաժողովն ընդունում է մեկամսյա ժամկետում՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Հանրապետական գորակոչային հանձնաժողովի որոշումները, ուժի մեջ մտնելուց հետո կարող են գանգատարկվել դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Զորակոչային հանձնաժողովների գործողությունները (անգործության) կարող են բողոքարկվել ՀՀ վարչական դատարանում: ՀՀ վարչական դատարան դիմելու կարգը և ժամկետները սահմանված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով:

<sup>9</sup> Տե՛ս նույն աղբյուրը

## **2015 թ-ի ձմեռային և 2016 թ. ամառային գորակոչերի ընթացքում գորակոչիկների իրավունքների վիճակի և կազմակերպության կողմից արձանագրած խնդիրների մասին**

2015-2016 թթ. նախագորակոչային և գորակոչային ժամանակահատվածում շարունակվել են մտահոգությունները և բողոքները գորակոչիկների և նրանց հարազատների կողմից, որոնք, ինչպես և նախկինում, կապված են ոչ պատշաճ բժշկական զննության իրականացման, գորակոչիկների մոտ առկա հիվանդությունների, այդ թվում՝ միաժամանակ մի քանի հիվանդությունների գուգակցման հետ (որոնց վերաբերյալ ՀՀ պաշտպանական գերատեսչության հիմնավորումը ներկայացված է վերոշարադրյալում), և առանց առողջական խնդիրների պատշաճ լուծման զինված ուժեր գորակոչելու հետ:

2015-2016 թթ-ի ձմեռային և 2016 թ-ի ամառային գորակոչերի ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմել է 57 հոգի՝ համապատասխանաբար 28 և 29 հոգի: Նշված անձանցից 47-ի խնդիրը կապված է եղել ոչ պատշաճ բժշկական զննության իրականացման և առողջական վիճակի վերաբերյալ բժշկական եզրակացությանը համաձայն չլինելու հետ:

Նշվածներից 7 հոգին դիմել է «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով սահմանված տարկետման և ազատման հիմքերի, ինչպես նաև օրենքով սահմանված արտոնությունների վերաբերյալ խորհրդատվություն և պարզաբանումներ ստանալու համար, 1 հոգի կրթությունը շարունակելու հիմքով ստացած տարկետման պարագայում զինկոմիսարիատի կողմից համապատասխան փաստաթղթերի տրամադրման մերժումը վերացնելու համար, 1 հոգի կրթական հաստատության կողմից փաստաթղթերի ընդունումը մերժելու օրինականության հարցի վերաբերյալ, 1 հոգի այլ երկրում զինձառայություն անցած լինելով, Հայաստանի Հանրապետությունում զինձառայություն անցնելու պարտավորության պարզաբանման (տե՛ս աղյուսակ 1):

Կազմակերպություն դիմած 57 անձանցից 32-ին տրամադրվել է բանավոր խորհրդատվություն, իսկ 25-ին, բացի բանավոր խորհրդատվությունից, տրամադրվել է





իրավական աջակցություն: 57 անձանցից 6-ը դիմել է ն՝ ձմեռային, ն՝ ամառային գորակոչերի ընթացքում:

**Աղյուսակ 1. Իրավական աջակցության տրամադրման պատկերը 2015-2016 թթ.**

Խնդիրը	2016 ամառային	2015-2016 ձմեռային	Ընդամենը
Առողջական/Ոչ պատշաճ բժշկական ծառայության տրամադրում	26	21	47
«Ձինապարտության մասին» ՀՀ օրենքով սահմանված տարկատման/ազատման հիմքերի պարզաբանում	1	6	7
Կրթության հետ կապված խնդիրների պարզաբանում	1	1	2
Այլ երկրում զինծառայություն անցած լինելով, ՀՀ-ում զինծառայություն անցնելու պարտավորության պարզաբանում	1	-	1
<b>Ընդամենը</b>	<b>29</b>	<b>28</b>	<b>57</b>

Բանավոր խորհրդատվության և հետագա իրավական աջակցության արդյունքում 57 հոգուց.

- 6 հոգու վերաբերյալ կայացվել է պարտադիր զինվորական ծառայությունից ազատման որոշում (գրավոր աջակցության արդյունքում 3-ը, որի պարագայում հարուցվել էր քրեական գործ՝ զինծառայությունից խուսափելու հիմքով, իսկ մյուս 3-ի դեպքում ուսումնասիրվել են բժշկական փաստաթղթերը և տրամադրվել է խորհրդատվություն, բժշկական եզրակացություն՝ ըստ առկա փաստաթղթերի)
- 11 հոգու վերաբերյալ կայացվել է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման որոշում, որից **3 հոգու**՝ 10 ամսով (2015-2016 թթ. ձմեռային գորակոչի ընթացքում, գրավոր աջակցության արդյունքում տարկետում ստացել է 1 հոգի, իսկ մյուս 2 հոգու դեպքում տրամադրվել է բժշկական խորհրդատվություն և տրվել բժշկական եզրակացություն), **1 հոգու**՝ 6 ամսով (2016 թ. ամառային գորակոչի ընթացքում գրավոր աջակցության արդյունքում), **7 հոգու**՝ 1 տարի և ավելի ժամկետով, (5-ը՝ 2016 թ. ամառային գորակոչի ընթացքում և 2-ը՝ 2015-2016 թթ. ձմեռային գորակոչի ընթացքում), որից 1 հոգի՝ 1 տարի ժամկետով /առողջական հիմքով/, 1-ը՝ 2 տարի /կրթության հիմքով/, 4-ը՝ 3 տարի /առողջական հիմքով/ և 1

հոգի՝ 4 տարի /կրթության հիմքով/: Նշված 7 անձանցից 1-ին տրամադրվել է գրավոր և բանավոր աջակցություն և 6-ին միայն բանավոր խորհրդատվություն, որոնց բժշկական փաստաթղթերը ուսումնասիրվել են և տրամադրվել է նաև բժշկական խորհրդատվություն ու բժշկական եզրակացություն:

- 7 հոգի (6-ը 2016 թ. ամառային գորակոչի ընթացքում և 1-ը 2015-2016 թթ. ձմեռային գորակոչի ընթացքում) ճանաչվել են զինվորական ծառայությանը պիտանի, սակայն համաձայն բժշկական փաստաթղթերի՝ առկա են հիմքեր զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետում ստանալու համար: Նշված անձինք հրաժարվել են մեկնել զինվորական ծառայության և նրանց նկատմամբ հարուցվել է քրեական գործ զինվորական ծառայությունից խուսափելու հիմքով: Նշվածներից 2-ի գործով կայացված որոշումները կազմակերպության կողմից բողոքարկվում են դատական կարգով:
- 17 հոգի ճանաչվել է պիտանի՝ շարային կամ սահմանափակումով զինվորական ծառայությանը և գորակոչվել՝ չնայած այն հանգամանքին, որ նրանց առողջական վիճակի հետազոտման ակտերի մեջ առկա են եղել առողջական խնդիրների առկայության մասին հավաստումներ, ինչպես նաև թերություններ, որոնք այնուամենայնիվ, չեն վերացվել բժշկական հանձնաժողովների կողմից նույնիսկ վերափորձաքննությունների արդյունքում կամ ընդհանրապես չեն նշանակվել վերափորձաքննություններ: Նշվածներից 2-ի գործով կազմակերպությունը շարունակում է տրամադրել իրավական աջակցություն:
- 2 հոգու գործին ընթացք չի տրվել քաղաքացու ցանկությամբ՝ կամ բժշկական փաստաթղթերը ձեռք չբերելու կամ հետագա հնարավոր խնդիրներ ունենալու պատճառով:
- 1 հոգի, որն ունի առողջական խնդիրներ, պետք է գորակոչվի հաջորդ հերթական գորակոչի ընթացքում, քանի որ գորակոչային տարիքը դեռ չի լրացել:
- 12 հոգու (որից 4-ը՝ անանուն, 5-ը՝ հեռախոսային կամ էլեկտրոնային խորհրդատվության միջոցով) տրամադրվել է միայն բանավոր խորհրդատվություն,



ուսումնասիրվել են բժշկական փաստաթղթերը և հետագա արդյունքների մասին կազմակերպությանը տվյալներ հայտնի չեն:

- 1 հոգու վերաբերյալ հստակ տեղեկություններ չկան:

Բոլոր անձանց հարցերով, որոնք հետամուտ են եղել իրենց իրավունքների պաշտպանությանը, պատրաստվել են գրություններ կամ տեղեկատվության հարցումներ: 2 զորակոչերի ընթացքում պատրաստվել է 34 գրություն: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, 34 գրությունից 33-ը հասցեագրված է ՀՀ ՊՆ, իսկ 1-ը Արաբկիր բժշկական կենտրոն: ՀՀ ՊՆ հասցեագրված 33 գրությունից 20-ին տրվել է լիարժեք (ըստ էության պատասխան՝ օրենքով սահմանված ժամկետներում), 11-ին՝ ժամանակին, սակայն ոչ ըստ էության պատասխան, 1 գրությանը տրվել է հիմնավորված պատասխան «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված ժամկետներում, 1 գրության պատասխանը տրվել է ուշացումով, սակայն ըստ էության պատասխան:

Նշված 11 գրության պատասխաններում որևէ կերպ անդրադարձ չի եղել բարձրացված խնդիրներին և պահանջներին:

«Արաբկիր» Բ/Կ հասցեագրված գրության պատասխանը ստացվել է ժամանակին և լիարժեք:

**Աղյուսակ 2. Կազմակերպության կողմից հասցեագրված գրությունների վերաբերյալ արձագանքը**

Գերատեսչությունը/ Պատասխան գրության ժամկետը	ՀՀ ՊՆ	«Արաբկիր» Բ/Կ	Ընդամենը
Ժամանակին լիարժեք/ըստ էության պատասխան	20	1	21
Ժամանակին ոչ ըստ էության պատասխան	11		11
Ժամանակին հիմնավորված պատասխան հղումով	1		1
Ուշացած լիարժեք պատասխան	1		1
<b>Ընդամենը</b>	<b>33</b>	<b>1</b>	<b>34</b>

Հարկ է նշել, որ առողջական խնդիրներով զորակոչված անձանցից 4-ը զորակոչվելուց ընդամենը մեկ կամ մի քանի օր հետո տեղափոխվել են հոսպիտալ՝ առողջական վիճակի վատթարացման հետևանքով:



*Նշված 2 գորակոչերի ընթացքում արձանագրվել են թե՛ նախկինում արձանագրված և ներկայումս շարունակվող խնդիրներ, թե՛ նոր խնդիրներ, որոնք կարելի է դասակարգել հետևյալ կերպ.*

1. Պիտանիության հարցի վերաբերյալ որոշումը կայացվում է՝ հաշվի չառնելով գորակոչիկների գանգատները և առողջական խնդիրները, որն ըստ էության, հանդիսանում է առողջական վիճակը վատթարացնող ակտ:
2. Կիրառվում է բժշկական փորձաքննության արդյունքներով բացահայտված առողջական խնդիրներին չհամապատասխանող ՊՆ 410 հրամանի այնպիսի կետ, որով գորակոչիկը ճանաչվում է զինվորական ծառայությանը պիտանի, և վերստին հանդիսանում է վիճակը վատթարացնող իրավական ակտ:
3. Բժշկական փաստաթղթերում առկա են մի շարք հակասական ախտորոշումներ, որոնցից գերադասվում է զինվորական ծառայությանը պիտանի համարվելու համար հիմնավորող ախտորոշումը և վերստին հանդիսանում է վիճակը վատթարացնող իրավական ակտ:
4. Ջորակոչիկի նկատմամբ կիրառում են այնպիսի նորմեր, որոնք ըստ Հրամանի, բուժմանը ենթարկվող և լավացմամբ ավարտվող հիվանդություններ են և կարող են կիրառվել միայն բուժելուց և լավացումից հետո, սակայն առանց որևէ բուժում իրականացնելու կիրառում են հողվածը և վերստին հանդիսանում է վիճակը վատթարացնող իրավական ակտ:
5. Հիվանդության հաստատման կամ ժխտման համար չի իրականացվում անհրաժեշտ լրացուցիչ հետազոտություն, որն անհրաժեշտ է պիտանիության հարցի որոշման համար և որն ամրագրված է ՀՀ ՊՆ 410 հրամանով, մասնավորապես.
  - այն հիվանդությունների դեպքում, երբ պիտանիությունը որոշվում է ըստ ֆունկցիայի խանգարման աստիճանների, ֆունկցիայի խանգարման աստիճանը<sup>10</sup>

<sup>10</sup> ՀՀ ՊՆ 2013 թվ. թիվ 410-Ն հրամանում զինակոչիկների և զինծառայողների պիտանելիությունը որոշվում է ըստ հիվանդության հետևանքով առաջացած օրգան-համակարգերի ֆունկցիաների խանգարման ծանրության աստիճանի: Ըստ այդմ, հիվանդության ծանրության աստիճաններն են՝ 1. ֆունկցիայի աննշան խանգարմամբ կամ առանց ֆունկցիայի խանգարման՝ պիտանի է զինվորական ծառայությանը, 2. ֆունկցիայի չափավոր խանգարմամբ՝ պիտանի է սահմանափակումով, 3. ֆունկցիայի ծանր/արտահայտված խանգարման՝ պիտանի չէ:

շատ հաճախ չի որոշվում, և առանց այդ հիմնավորման է կիրառվում ՀՀ ՊՆ 410 հրամանի հոդվածը,

- շատ հաճախ չի որոշվում արյան շրջանառության խանգարման աստիճանը, որը պարտադիր է մի շարք հիվանդությունների առկայության դեպքում,
- ալերգիաների դեպքում շատ հաճախ չի որոշվում ալերգենի նկատմամբ զգայունությունը,
- սինկոպեի նոպաների դեպքում վեջնականապես չի ժխտվում կամ հաստատվում սինկոպեի առկայությունը, որը կարևոր հանգամանք է գորակոչիկի պիտանիության համար,
- սրտի ռիթմի և հաղորդականության խանգարում ունեցող անձանց, ըստ Հրամանի, պետք է պարտադիր ենթարկել հոլթեր-մոնիտորինգի հետազոտման, որը շատ հաճախ չի իրականացվում,
- ՀՀ ՊՆ թիվ 410-13 հրամանի 10-րդ հոդվածի համաձայն՝ էպիլեպսիան պետք է հաստատվի մինչև մեկ ամիս տևողությամբ ստացիոնար հետազոտմամբ, անհրաժեշտության դեպքում անցկացվում են պրովոկացիոն տեստեր: Սակայն հաճախ հետազոտում են առավել կարճ ժամանակահատվածում, օրինակ՝ մեկ շաբաթում, ինչպես նաև չեն իրականացվում պրովոկացիոն տեստեր: Եվ այս պարագայում՝ առանց անհրաժեշտ տևողությամբ հետազոտելու, գորակոչիկները հիմնականում պիտանի են ճանաչվում և գորակոչվում:

6. Բուժման նպատակով տարկետում ստանալու ժամանակահատվածում իրականում բուժում չի կատարվում կամ այն կրում է ձևական բնույթ, իսկ արդեն հաջորդ հերթական գորակոչին ճանաչվում են պիտանի, չնայած նրանց առողջական վիճակի փոփոխություն տեղի չի ունեցել: Կազմակերպություն դիմած գորակոչիկներից ոչ ոք նախկինում բուժման նպատակով տարկետում ստանալուց հետո որևէ բուժում չի ստացել:

---

զինվորական ծառայությանը կամ տարկետում է տրվում: Ֆունկցիայի խանգարման աստիճանների նման դասակարգման մեջ առկա է սուբյեկտիվություն, քանի որ ֆունկցիայի խանգարման ծանրությունը կարգավորված չէ ՊՆ հրամանով և ծանրության աստիճանը բազմաթիվ դեպքերում որոշում է բժշկական փորձքնության հանձնաժողովը:

Կազմակերպություն դիմած բոլոր այն գորակոչիկները, որոնք նախկին գորակոչերի ընթացքում ստացել են տարկետում բուժման նպատակով, տարկետման ընթացքում որևէ բուժում չեն ստացել, առողջական վիճակի բարելավում չի գրանցվել, սակայն 2015-2016 թթ. գորակոչերին ճանաչվել են պիտանի զինվորական ծառայության համար:

7. Անտեսելով բժշկական հետազոտության արդյունքները՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշման մեջ շատ հաճախ կատարվում են մեխանիկական փոփոխություններ, որոնք աղավաղում են գորակոչիկի առողջության իրական պատկերը: Մասնավորապես՝ բժշկական հետազոտությամբ ախտորոշված տվյալ հիվանդության «չափավոր» ձևը ԿԲՀ որոշման մեջ առանց հիմնավորման փոխարինվում է «աննշան» բառով, որի արդյունքում գորակոչիկը անօրինական կերպով ճանաչվում է պիտանի զինվորական ծառայությանը:
8. ՀՀ ՊՆ 2013 թ. 410 հրամանում երբեմն բացակայում են հիվանդությունների վերաբերյալ հոդվածներ, որոնք առկա են Հիվանդությունների միջազգային դասակարգման 10-րդ վերանայման մեջ: Մինևույն ժամանակ հանձնաժողովների կոմից տրվում են ախտորոշումներ, որոնք գոյություն չունեն Առողջապահության համաշխարհային կազմակերպության Հիվանդությունների միջազգային դասակարգման 10-րդ վերանայման<sup>11</sup> մեջ, ինչպես նաև սահմանված չեն ՀՀ ՊՆ թիվ 410 հրամանով: Այսինքն՝ չի ապահովվում օբյեկտիվությունը և ախտորոշումների ստանդարտացումը:
9. Երբեմն նույնիսկ առողջական խնդրի և գանգատների առակության դեպքում բուժզննություն անցնելուց հետո չի գրանցվում որևէ ախտորոշում, սակայն կայացվում է պիտանիության վերաբերյալ որոշում:
10. Երբեմն չի բացահայտվում գորակոչիկի մոտ առկա գանգատների պատճառը, որը փորձաքննող հանձնաժողովը պարտավոր է կատարել, սակայն առանց այդ գործողության կատարման կայացվում է պիտանիության որոշում:

<sup>11</sup> <http://apps.who.int/classifications/icd10/browse/2016/en>



11. Քաղաքացիական բժշկական հաստատություններին սովորաբար հրահանգավորվում է գանգատի դեպքում չիրականացնել նախագորակոչային կամ գորակոչային տարիքի անձանց որևէ բուժօգնություն և չտրամադրել եզրակացություն՝ առանց որևէ իրավական հիմնավորման գորակոչիկներից պահանջելով ներկայացնել գորակոչիկ լինել կամ չլինելու մասին հավաստող տեղեկանք: Բացի այդ, երբեմն նաև բժիշկների վրա ճնշում է գործադրվում համապատասխան ախտորոշումները փոխելու և զինվորական ծառայությանը պիտանի ճանաչելու համար համապատասխան ախտորոշում և եզրակացություն տրամադրելու համար:
12. Առողջական վիճակի հետազոտության արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում գորակոչիկը, փաստորեն, հնարավորություն չի ունենում բողոքարկել որոշումը, քանի որ չի դադարեցվում նրա գորակոչը մինչև հարցի վերջնական լուծումը:
13. Ձինված ուժեր գորակոչվելու համար հիմք է հանդիսանում ՀՀ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի նախագահի որոշումը, որն ըստ ՀՀ ՊՆ 410 հրամանի, վերջնական է և դրա բողոքարկման մեխանիզմներ և ժամկետներ չեն սահմանվում: Մինչդեռ, ՀՀ ՊՆ 410 հրամանը սահմանում է, որ ԿԲՀ որոշումները/եզրակացությունները պետք է հաստատվեն ՀՀ գորակոչային հանձնաժողովների կողմից, սակայն գործող պրակտիկայում ԿԲՀ որոշումները/եզրակացություններն այն վերջնական ակտերն են, որոնց հիման վրա գորակոչիկը զինծառայության համար պիտանի ճանաչվելով գորակոչվում է զինված ուժեր, քանի որ ԿԲՀ որոշումներից/եզրակացություններից հետո գորակոչվելու վերաբերյալ վարչական ակտ ՀՀ զինվորական հանձնաժողովների կողմից չի ընդունվում: Հետևաբար, այլ որոշում/ակտ, որը կարող է բողոքարկվել գոյություն չունի: Այսինքն, ոչ «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքով, ոչ ՀՀ ՊՆ 410 հրամանով չի նախատեսվում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությունների բողոքարկման ընթացակարգ:



14. Բժշկական հետազոտություն անցնելու համար գորակոչիկներին տրամադրվող տրանսպորտային ծախսերի փոխհատուցման չափը շարունակվում է մնալ անբավարար, որի պատճառով, շատ դեպքերում, գորակոչիկները հնարավորություն չեն ունենում ներկայանալ և անցնել հանրապետական բուժօգնություն:
15. Շարունակվում է տարբեր պատճառաբանություններով գորակոչիկներին չտրամադրվել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով սահմանված<sup>12</sup> իրենց առողջական վիճակի մասին եզրակացությունը՝ չնայած ՊՆ հավաստիացումներին:
16. Մտահոգիչ է պաշտպանական գերատեսչության կողմից առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ գորացրված անձանց փաստաթղթերի տրամադրման ժամկետների անորոշությունը: Ի դեպ, «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի 34-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսվում է առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակվելու դեպքում զինծառայողին նաև նրա առողջական վիճակի վերաբերյալ առկա փաստաթղթերը տրամադրումը:

Հարկ է նշել, որ նույն ժամանակահատվածում կազմակերպությունը ուսումնասիրել և ամփոփել է ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումները, համաձայն որոնց առանձին քաղաքացիներ այդ ժամանակահատվածում ստացել են պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում կամ ազատում («Զինապարտության մասին» ՀՀ օրենքի հոդված 12, 1-ին մաս, գ) կետ, հոդված 14, 1-ին մաս և հոդված 16, 2-րդ մաս):

Այսպիսով, 2015-2016 թթ. ձմեռային գորակոչի ընթացքում կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում է ստացել 62

<sup>12</sup> «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, Հոդված 7՝ Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:





հոգի (43 հոգի, որոնց դեպքում նշված չէ տարկետում ստանալու հիմքը, 13 հոգի կրթությունը շարունակելու հիմքով, 6 հոգի որոնց դեպքում նշված չէ տարկետում ստանալու հիմքը, սակայն նախկինում նույն անձինք ստացել են տարկետում սպորտի բնագավառում բացառիկ ունակությունների համար), և ազատվել է պարտադիր զինվորական ծառայությունից 6 հոգի (1 հոգի, որի դեպքում նշված չէ տարկետում ստանալու հիմքը, 1 հոգի, որի դեպքում նշված չէ տարկետում ստանալու հիմքը, սակայն նախկինում նույն անձը ստացել են տարկետում մշակույթի բնագավառում բացառիկ ունակությունների համար և 4 հոգի՝ սպորտի բնագավառում բացառիկ ունակությունների համար):

2016 թ. ամառային զորակոչի ընթացքում կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում է ստացել 77 հոգի (2 հոգի, որի դեպքում նշված չէ տարկետում ստանալու հիմքը, 65 հոգի, որոնց դեպքում նշված չէ տարկետում ստանալու հիմքը, սակայն նախկինում նույն անձինք ստացել են տարկետում հոգևորական լինելու հիմքով և 10 հոգի կրթությունը շարունակելու հիմքով), և ազատվել է պարտադիր զինվորական ծառայությունից 22 հոգի և բոլորի դեպքում նշված չէ տարկետում ստանալու հիմքը, սակայն նախկինում այդ անձինք ստացել են տարկետում հոգևորական լինելու հիմքով:

Այսպիսով, շարունակվում է ըստ կրոնական կարգավիճակի կամ զբաղմունքի զորակոչիների նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորումը:

## Առաջարկություններ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ներքոնշյալ առաջարկները, որոնք հիմնված են կոնկրետ փաստերի և անձանց հետ կապված դեպքերի վրա, բազմիցս ներկայացվել են պաշտպանական գերատեսչությանը: Վերստին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները.

1. Ըստ առողջական խնդիրների զինվորական ծառայությանը զորակոչիկների պիտանիության կարգը սահմանել օրենքով (չնայած ՀՀ պաշտպանության նախարարությունը,<sup>13</sup> անդրադառնալով այս հարցին, գտնում է, որ հրամանը օրենքով փոխելու անհրաժեշտությունը գտնում են ոչ նպատակահարմար, քանի որ այն իրենից ներկայացնում է բժշկական փաստաթուղթ, և չափորոշիչների փոփոխությունների դեպքում հնարավոր չէ արագ արձագանքել և կատարել անհրաժեշտ փոփոխությունները):

2. Մինչ համապատասխան օրենքի ընդունումը ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 410 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

- Հստակեցնել հիվանդությունների ցանկում նշված հիվանդությունների սահմանումը՝ ըստ նրանց խանգարման աստիճանների,
- Հիվանդությունների ախտորոշումները համապատասխանեցնել Առողջապահության համաշխարհային կազմակերպության Հիվանդությունների միջազգային դասակարգման 10-րդ վերանայման փաստաթղթին,
- Ամրագրել զորակոչիկին նրա առողջական վիճակի ուսումնասիրության վերաբերյալ բժշկական զննության եզրակացության մասին ակտի պարտադիր տրամադրումը՝ անկախ զորակոչիկի դիմումի առկայությանը
- Սահմանել զորակոչիկի մոտ մի քանի հիվանդությունների զուգակցմամբ զինծառայությանը նրա պիտանիության որոշման կարգը

<sup>13</sup> [http://hcav.am/wp-content/uploads/2014/10/M\\_2014-04.06\\_202-1.pdf](http://hcav.am/wp-content/uploads/2014/10/M_2014-04.06_202-1.pdf)

- Ձորակոչիկի առողջական վիճակի ուսումնասիրության վերաբերյալ բժշկական եզրակացության ակտում որպես պարտադիր պայման ներառել զինվորական ծառայությանը բնորոշ ծանրաբեռնվածության պայմաններում նրա առողջական վիճակի հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումների գրառումը և դրանց վատթարացումը կանխարգելող բժշկական ցուցումները:

3. Օրենսդրորեն սահմանել բժշկական ակտի բողոքարկման մեխանիզմը:

4. Ապահովել զորակոչիկների և զինծառայողների պարտադիր համալիր բժշկական զննությունը՝ անկախ գանգատների առկայությունից:

5. Հիվանդության հաստատման կամ ժխտման համար ապահովել անհրաժեշտ լրացուցիչ հետազոտության իրականացումը և զորակոչիկների բուժզննության վերաբերյալ ախտորոշումը համապատասխանեցնել առողջության իրական վիճակին:

6. Վերացնել բժշկական հաստատությունների կողմից զորակոչիկներից որևէ տեղեկանքի պահանջը, որը կհաստատի նրա զորակոչիկ լինելը:

7. Ապահովել սահմանափակումներով ծառայությանը պիտանի ճանաչված զինծառայողների՝ շարային ծառայության մեջ ներգրավումը բացառող, կանխարգելող անկախ վերահսկողական մեխանիզմ:

8. Վերացնել զորակոչիկների նկատմամբ խտրական վերաբերմունքն ըստ կրոնական զբաղմունքի տեսակի:



## Հավելված

Ներկայացվում է մի քանի գորակոչիկների դեպքերի նկարագրությունները.

Հիվանդության հաստատման կամ ժխտման համար չի իրականացվում անհրաժեշտ լրացուցիչ հետազոտություն, որը խիստ կարևոր է պիտանիության հարցի որոշման համար:

### 1. Հ. Ս.

Բժշկական փաստաթղթերի համաձայն՝ գորակոչիկի մոտ ախտորոշվել է «Հիսի խրձի աջ ոտիկի մասնակի պաշարում»: ՊՆ թիվ 410 հրամանի 26-րդ հոդվածի համաձայն՝ հիսի խրձի աջ ոտիկի մասնակի պաշարում ունեցող անձինք ճանաչվում են պիտանի զինվորական ծառայության համար, եթե ԷՍԳ-ով չեն արձանագրվել ռիթմի և հաղորդականության խանգարման այլ դրսևորումներ: Փաստաթղթերի համաձայն՝ տվյալ գորակոչիկի մոտ առկա է փորոքների վաղաժամ վերաբնեռացման համախտանիշ, որը հաղորդականության խանգարում է, կարող է լինել WPW կամ CLC տիպի, որի հաստատման դեպքում նաև առանձին հոդված է նախատեսվում: Չնայած սրտի ռիթմի և հաղորդականության խանգարում ունեցող անձանց պետք է պարտադիր ենթարկել հոլթեր-մոնիտորինգի հետազոտման, նշված գորակոչիկի համար չի անցկացվել տվյալ հետազոտումը և զինվորական ծառայություն անցնելու մասին որոշում է կայացվել այդ հետազոտման տվյալների բացակայության պարագայում:

### 2. Ռ. Ա.

Զորակոչիկի մոտ ախտորոշվել է «Անձի շեշտվածություն ինքնավնասումով», «ողնաշարի կրծքային հատվածի I աստիճանի սկոլիոզ և II-III աստիճանի կիֆոզ՝ ֆունկցիայի աննշան խանգարումով», «երկկողմանի II աստիճանի երկայնակի հարթաթություն՝ քայլքի աննշան խանգարումներով», որոնց կապակցությամբ ճանաչվել է պիտանի շարային ծառայության՝ սահմանափակումով:

Սակայն հետազոտությունների ընթացքում չի պարզվել հաճախակի կրկնվող գլխապտույտների և ուշագնացությունների պատճառը: Չի իրականացվել ԷԷԳ, ռենտգեն,



ԿՏ, ստանդարտ պրովոկացիոն թեսթեր, նեյրոֆթալմոլոգի կոնսուլտացիա, որոնք կարող էին բացահայտել նշված խնդիրները:

Նախկինում ունեցել անգիտորոշումներով, որին 2016 թ-ի հետազոտություններով ևս չեն անդրադարձել:

Կիրառվում է գորակոչիկի առողջական վիճակին ՀՀ ՊՆ 410 հրամանի չհամապատասխանող կետ

3. Ռ. Վ.

Բժշկական փաստաթղթերի համաձայն՝ գորակոչիկի մոտ առկա են այնպիսի խնդիրներ, որոնց դեպքում պետք է առաջարկվեր վիրահատություն: Համաձայն 410 հրամանի 52-րդ հոդվածի քրոնիկական պարապրոկտիտ ունեցող գորակոչիկներին ու զինձառայողներին առաջարկվում է վիրահատություն, որը չի կատարվել: Զորակոչիկի մոտ առկա է պոչուկաէպիթելային ուղիներ՝ խրոնիկ բարդացած ձև: Ըստ գանգատների առկա է արտադրություն: Նշված գորակոչիկը փորձաքննվել է 52-րդ հոդված «Գ» կետով, սակայն «Գ» կետին է վերաբերում կրկնվող սուր ընթացքով՝ առանց արտաքին խուղակի քրոնիկական պարապրոկտիտը: Մինչդեռ գորակոչիկի մոտ առկա է արտաքին խուղակ, հետևաբար Գ կետը կիրառելի չէր նրա նկատմամբ: Զորակոչիկը հրաժարվել է զինվորական ծառայություն անցնելուց:

4. Գ.Բ.

Բժշկական փաստաթղթերի համաձայն՝ գորակոչիկի մոտ առկա է բնածին էպիլեպսիա, գեներալիզացված տոնիկ-կլոնիկ նոպաներով: Հիվանդության առկայությունը հաստատված է քաղաքացիական և զինվորական բժշկական մարմինների կողմից: Հիվանդության կապակցությամբ որևէ հակացնցումային (հակաէպիլեպտիկ) բուժում գորակոչիկը չի ստանում:

Կենտրոնական բժշկական հանձնաժողովի 2012 թ. կայացրած որոշումով, գորակոչիկը, ախտորոշումը՝ Էպիլեպսիա ըստ բժշկական փաստաթղթերի, ԷՍԳ փոփոխություններով, ՀՀ ՊՆ 2010 թ. թիվ 175 հրամանի 10-րդ հոդվածի «Գ» կետի համաձայն ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայությանը՝ խաղաղ ժամանակ:



2015 թ. ձմեռային գորակոչի շրջանակներում գորակոչիկը նույն հիվանդության կապակցությամբ հետազոտվել է մի շարք բժշկական հաստատություններում: Հետազոտությունների ընթացքում էպիլեպսիայի նոպաներ չեն գրանցվել: Նույն չի գրանցվել նաև քնի դեպրիվացիայից հետո: Պրոֆոկացիոն տեստեր չեն անցկացրել: Զորակոչիկի մոտ ախտորոշվել է «էպիլեպսիա ըստ բժշկական փաստաթղթերի»:

ԿԲՀ 25.01.2016 թ. որոշումով գորակոչիկը (ախտորոշում՝ էպիլեպսիա ըստ բժշկական փաստաթղթերի, ՀԵՊ չի ընդունում, եռակի ստուգված ԷԷԳ դեպրիվացիաներով նեգատիվ, վերջին ամփոփագիրը 2009 թվականին) ՀՀ ՊՆ թիվ 410 հրամանի 10-րդ հոդվածի «Գ» կետի համաձայն ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը՝ սահմանափակումով:

Անհասկանալի է «ըստ բժշկական փաստաթղթերի» արտահայտությունը, քանի որ ՀՀ ՊՆ թիվ 410 հրամանի 10-րդ հոդվածը սահմանում է հիվանդության առկայությունը «ըստ անամնեզի»: 10-րդ հոդվածը հստակ սահմանում է՝ երբ քաղաքացիական բժշկական (բուժկանխարգելիչ) կամ զինվորական բուժկանխարգելիչ հիմնարկների փաստաթղթերով հաստատվում է, որ անցյալում եղել է ընկնավորություն, բայց վերջին 5 տարվա ընթացքում չի կրկնվել և գորակոչի ժամանակ ստացիոնար հետազոտման պայմաններում էլեկտրաուղեղագրիչը (էլեկտրաէնցեֆալոգրաֆ) ախտաբանական փոփոխություններ չի գրանցել ինչպես հանգստի, այնպես էլ ֆունկցիոնալ ծանրաբեռնվածության ժամանակ, ապա ըստ I և III սյունակների փորձաքննվող անձինք սույն հոդվածի «Գ» կետի համաձայն ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը՝ սահմանափակումով: Սակայն, ՀՀ պաշտպանության նախարարությունը անտեսել է, որ 2012 թ-ի հոկտեմբերի 2-ին Գ. Բ. -ի մոտ «Արաբկիր» բժշկական համալիրում ախտորոշվել է «էպիլեպսիա՝ առաջնային գեներալիզացված, մասնավորապես տոների էպիլեպտիկ նոպաներով: Բացի այդ, 04.02.2013-12.02.2013 թ-ին Էրեբունի ԲԿ-ում ստացիոնար հետազոտման արդյունքում տրամադրված էպիկրիզում ախտորոշման բաժնում արձանագրված է. «էպիլեպսիա մանկուց՝ գեներալիզացված տոնիկ-կլոնիկ նոպաներով, գրանցված ԷԷԳ փոփոխություններով 01.10.2009 թ. կատարված հետազոտության արդյունքում: Վերջին նոպան եղել է 2012 թ-ի



հոկտեմբերին»: Այսինքն՝ փաստաթղթերով վերջին նույն գրանցված է 2012 թ-ին, և սա չի կարող պատկանել ՀՀ ՊՆ թիվ 410 հրամանի 10-րդ հոդվածի «Գ» կետին: Հետևաբար, գորակոչիկը պետք է փարձաքննվեր ՀՀ ՊՆ թիվ 410 հրամանի 10-րդ հոդվածի «Բ» կետի համաձայն (հազվադեպ է պիլեպտիկ նույններ, տարեկան երեք անգամից քիչ) և պետք է ճանաչվեր ժամանակավորապես ոչ պիտանի, սակայն ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար և գորակոչման սկզբնական օրերի ընթացքում առողջական վիճակի վատթարացման ընթացքում հայտնվել է հոսպիտալում:

5. Ժ.Գ.

Զորակոչիկի պիտանիության վերաբերյալ ակնհայտ անհիմն որոշում է կայացվել, քանի որ գորակոչիկի առողջական խնդիրները հիմնավորված են նաև բժշկական փաստաթղթերում ներկայացված օբյեկտիվ հետազոտության տվյալներով և ախտորոշումներով: Նշված գորակոչիկը 13.10-14.10.2015 թ-ին հետազոտվել է «Արմենիա» բժշկական կենտրոնի էնդոկրինոլոգիայի բաժանմունքում և նրա մոտ ախտորոշվել է «հիպոթալամիկ ճարպակալում երրորդ աստիճանի, ՖՁԻ 36.2, չափավոր արտահայտված երկկողմանի իսկական գինեկոմաստիա, էստրադիոլ 48.03 պգ/մլ»: ՀՀ ՊՆ թիվ 410 հրամանի 20-րդ հոդվածի համաձայն՝ չափավոր և զգալի արտահայտված իսկական գինեկոմաստիայով հիվանդները փորձաքննվում են «Բ» կետով և ճանաչվում են ժամանակավորապես ոչ պիտանի զինծառայության համար: Զորակոչիկը նաև 06.10-20.10.2015 թ-ին հետազոտվել է «Էրեբունի» բժշկական կենտրոնում և համաձայն սոնոգրաֆիայի արդյունքների՝ լյարդը մեծացած է 4.5 սմ-ով: Ախտորոշվել է ճարպային հեպատոզ՝ լյարդի ֆերմենտային ֆունկցիայի չափավոր խանգարմամբ: 30.10-01.11.2015 թ-ին հետազոտվել է «Նորք» ինֆեկցիոն կենտրոնում, ինչի արդյունքում որոշվել է AST 75 U/L, ALT 29 U/L: 18.12.2015 թ-ին «Էրեբունի» բժշկական կենտրոնում լաբորատոր հետազոտությամբ որոշվել է AST 51.3 U/L, ALT 146.3 U/L: ՀՀ ՊՆ թիվ 410 հրամանի 30-րդ հոդվածը նախատեսում է որովայնի խոռոչի օրգանների հիվանդություններ և զարգացման արատներ, համաձայն որի «Բ» կետին են պատկանում ֆունկցիաների չափավոր խանգարումով հիվանդությունները (լյարդի ֆերմենտային ֆունկցիայի չափավոր խանգարում): Անկախ ախտաճնային հիվանդությունների առկայությունից



կայուն 2 սմ և ավելի հեպատոմեգալիայով գորակոչիկները և զինծառայողները փորձաքննվում են «Դ» կետով (Ձորակոչիկներին՝ տարկետում մինչև մեկ տարի) կամ «Բ» կետով (Ձորակոչիկները՝ ժամանակավորապես պիտանի չեն)՝ ըստ ֆունկցիայի խանգարման աստիճանի:

Նախկինում նույն առողջական խնդրով գորակոչիկին տրամադրվել է տարկետում՝ 10 ամիս ժամանակով

Այսպիսով, գորակոչիկը, ըստ իր առողջական վիճակը բնութագրող բժշկական փաստաթղթերի, պետք է ճանաչվեր ժամանակավորապես ոչ պիտանի, սակայն նա ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար, սակայն հրաժարվել է մեկնել զինվորական ծառայության: Կազմակերպության կողմից իրավական աջակցության արդյունքում գորակոչիկի վերաբերյալ կայացվել է զինվորական ծառայությունից ազատման որոշում:

#### 6. Ա.Բ.

Արմենիա Բ/Կ-ում կատարված հետազոտման ակտի ախտորոշման համաձայն՝ գորակոչիկն ունի վերին և ստորին վերջույթների անգիոտրոֆոններով՝ ֆունկցիայի չափավոր խանգարմամբ, որը ՀՀ ՊՆ Թիվ 410-13 հրամանի 48-րդ հոդվածի «Գ» կետով նախատեսում է՝ գորակոչիկներին տարկետում մինչև մեկ տարի: Սակայն, ԿԲՀ որոշմամբ գորակոչիկը ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար և գորակոչվել զինծառայության:

#### 7. Է.Թ.

Բժշկական փաստաթղթերի համաձայն՝ գորակոչիկը հետազոտվել է բազմաթիվ հիվանդանոցներում, գանգատվել է դժվարամիզությունից, մեզի շիթի բարակությունից, կաթ կաթ միզարձակությունից, կանգնած միզարձակման դժվարությունից: 15.03.2016 թ. հետազոտվել է թիվ 2 հիվանդանոցում, որտեղ ախտորոշվել է՝ նեյրոգեն միզապարկ, անոգենիտալ հատվածի զգացողության իջեցմամբ: 16.03.2016 թ. հետազոտվել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնում, որտեղ ախտորոշվել է՝ միզաքարային հիվանդություն, քարեր երկու երիկամներում 0.2-0.3 սմ, ձախ երիկամի երկատում,





նեյրոզեն միզապարկ՝ միզարձակման արտահայտված խանգարումով: 11.04.2016 թ. հետազոտվել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնում, որտեղ ախտորոշվել է՝ միզաքարային հիվանդություն, քարեր երկու երիկամներում 0.2-0.3 սմ, ձախ երիկամի երկատում, նեյրոզեն միզապարկ՝ միզարձակման արտահայտված խանգարումով: 24.06.2016 թ. հետազոտվել է Էրեբունի հիվանդանոցում, սակայն ախտորոշում չի տրվել: 16.06.2015 թ. հետազոտվել է Արմենիա բժշկական կենտրոնում, որտեղ ախտորոշվել է նեյրոզեն միզապարկ՝ միզարձակման ֆունկցիայի խիստ արտահայտված խանգարմամբ, Spina bifida S1: 28.07.2016 թ. հետազոտվել է Արմենիա բժշկական կենտրոնում, որտեղ ախտորոշվել է՝ միզային համակարգի զարգացման արատ, լրիվ երկատված ձախ երիկամ, առանց արտազատական ֆունկցիայի խանգարման, այն դեպքում, երբ գորակոչիկը գանգատվել է՝ դժվարամիզությունից, կաթ-կաթ միզարձակությունից, երբեմն կանգնած միզարձակության անհնարինությունից: Հետևաբար, ախտորոշման մեջ նշված «առանց արտազատական ֆունկցիայի խանգարման» արտահայտությունը ճիշտ չի արտացոլում գորակոչիկի գանգատները և հակասում է նախկինում որոշված ֆունկցիայի խանգարման աստիճանին և նրա մոտ առկա լուրջ խնդիրներին: Կենտրոնական բժշկական հանձնաժողովը, հիմք ընդունելով միայն վերջին եզրակացությունը՝ լրիվ երկատված երիկամ, առանց ֆունկցիայի խանգարման, գորակոչիկին ճանաչել է պիտանի՝ ՀՀ ՊՆ Թիվ 410 հրամանի 54 հոդվածի «Գ» կետի համաձայն:

ՀՀ ՊՆ Թիվ 410-13 հրամանի 54 հոդվածի համաձայն «Բ» կետին են վերաբերում երիկամների անոմալիաները՝ այդ թվում երիկամների և դրանց մասերի երկատումները: Նախկինում որոշված ֆունկցիայի խանգարման արտահայտված աստիճանը գորակոչիկին նույնպես դարձնում է «Բ» կետով փորձաքննվող, իսկ խիստ արտահայտվածը՝ «Ա» կետով փորձաքննվող: Նվազագույնը 54 հոդվածի «Բ» կետով գորակոչիկը ժամանակավորապես պիտանի չէ, իսկ 54 հոդվածի «Ա» կետով՝ (ֆունկցիայի խիստ արտահայտված խանգարում) պետք է հանվի հաշվառումից: Սակայն, վերջինս ևս ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար, սակայն հրաժարվել է մեկնել զինվորական ծառայության:

8. Ռ.Յ.

Չորակոչիկի մոտ 11.04.2016 թ. Վանաձորի հավաքագրման հանձնաժողովի կողմից ախտորոշվել է՝ «հարմարվողականության խանգարում, բնավորության գծերի շեշտվածություն, օնիխոֆագիա» և ՀՀ ՊՆ թիվ 410-13 հրամանի 7-րդ հոդվածի «Բ» կետի համաձայն ճանաչվել է զինվորական ծառայությանը ոչ պիտանի: Սակայն, 13.04.16 թ. ուղեգրվել է Ավան հոգեկան առողջության կենտրոն, որտեղ կրկին ախտորոշվել է «բնավորության գծերի շեշտվածություն, օնիգոֆագիա», որոշվել է, որ առկա է տագնապ ծանր աստիճանի և դեպրեսիա միջին բարձր աստիճանի: Այս նույն հիվանդությունները դեռևս առկա են եղել 2007 թ-ին, որի կապակցությամբ զորակոչիկը ՀՀ ՊՆ 373 06 հրամանի 7-ի «Բ» կետի համաձայն ճանաչվել է ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայությանը:

Ներկա հիվանդությունների ախտորոշումների պայմաններում «բնավորության գծերի շեշտվածություն, օնիգոֆագիա» զորակոչիկը ՀՀ ՊՆ թիվ 410 13 հրամանի համաձայն պետք է ճանաչվեր ոչ պիտանի զինվորական ծառայությանը: Դա պարզ է դառնում հրամանի համապատասխան հոդվածի դրույթներից և նաև այդպես է որոշվել Վանաձորի ԿՀՀ-ում և Ավան հոգեկան առողջության կենտրոնում՝ որոշվել է, որ զորակոչիկի առողջական վիճակը համապատասխանում է 7-րդ հոդվածի «Բ» կետին: Մինչդեռ ԿԲՀ նույն ախտորոշման պայմաններում որոշել է, որ զորակոչիկը ախտորոշումը համապատասխանում է հոդված 7-ի «Գ» կետին, որը նախատեսում է պիտանելիություն՝ սահմանափակումով: 7-րդ հոդվածի «Գ» կետին են վերաբերում բուժմանը ենթարկվող և լավացումով ավարտվող թեթև և կարճատև արտահայտություններով հոգեկան խանգարումները (օբսեսիվ, կոմպուլսիվ, ֆոբիկ, հիստերիկ): Սակայն, զորակոչիկին չեն բուժել, հետևաբար չեին կարող որոշել նրա պատկանելիությունը ըստ «Գ» կետի, որի համար բուժումը պարտադիր պայման է: Բացի դա, զորակոչիկի առողջական խնդիրները առկա են դեռ 2007 թ-ին, այսինքն երկարատև բնույթի են: Չի որոշվել նաև տագնապ ծանր աստիճանի և դեպրեսիա միջին բարձր աստիճանի բնույթը և դրանց մասով պիտանելիությունը չի որոշվել (դրանք առանձին



հողվածներ են): Ձորակոչիկը անօրինական կերպով ճանաչվել է պիտանի և գորակոչվել զինվորական ծառայության:

9. Ռ. Դ.

Համաձայն բժշկական հետազոտման ակտի՝ գորակոչիկի մոտ առկա է ձախ երիկամի գոտկային դիստոպիա՝ արտազատական ֆունկցիայի չափավոր խանգարումով:

ՀՀ ՊՆ թիվ 410 հրամանի 54 հոդվածի «Բ» կետի համաձայն՝ գորակոչիկները ժամանակավորապես պիտանի չեն: Սակայն, անհասկանալի է, որ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից տրված որոշման մեջ «չափավոր» բառը փոխարինվել է «աննշան» բառով և գորակոչիկը 54 հոդվածի «Գ» կետով ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը՝ սահմանափակումով, որից վերջինս հրաժարվել է:

10. Ս. Լ.

Բժշկական փաստաթղթերի համաձայն՝ գորակոչիկը գանգատվել է սրտի շրջանի ծակող ցավերից, աչքերի առաջ մթազնումից դիրքային փոփոխության ժամանակ, գլխապտույտից, զարկերակային ճնշման տատանումներից: Ըստ գորակոչիկի խոսքերի՝ 4-5 տարեկան հասակում աջ աչքի վիրահատություն է տարել, գանգատվում է աջ աչքի ցածր տեսողությունից՝ պատկերները հազիվ է նշմարում: Նաև նշում է, որ ծանրություն չի կարողանում բարձրացնել, քանի որ գոտկային հատվածում սուր ցավեր են առաջանում, իսկ աջ ոտքի շրջանում՝ ծակոցներ: Նրան նաև արգելվել է զբաղվել սպորտով:

Էլեկտրասրտագրությամբ նրա մոտ հայտնաբերվել է «Հիսի խրձի աջ ոտիկի մասնակի պաշարում», որը համարվում է սրտի հաղորդականության խանգարում: ՀՀ ՊՆ թիվ 410 հրամանի համաձայն՝ սրտի ռիթմի և հաղորդականության խանգարում ունեցող անձինք պետք է հետազոտվեն պարտադիր հոլթեր-մոնիտորինգի իրականացմամբ, որը սակայն չի իրականացվել: Ձորակոչիկի տեսողության խնդիրներն առավել լուրջ են գրանցվել, երբ նա հետազոտություն է անցել տեղական պոլիկլինիկայում, որը մեծապես տարբերվում է բժշկական հանձնաժողովի կողմից տրված հետազոտման ակտերում



ներկայացված վիճակից: Ձորակոչիկը բուժզննություն է անցել տեղի պոլիկլինիկայում, որտեղ նրան տեսողությունը գնահատվել է՝ աջ աչքի տեսողության սրությունը՝ 0.01, իսկ ձախ աչքի տեսողության սրությունը՝ 1.0, իսկ համաձայն ՀՀ ՊՆ 410 հրամանի 85-րդ հոդվածի «Բ» կետի, այն է՝ ակնագնդի բացակայություն կամ կուրություն կամ մեկ աչքի տեսողությունը 0,05 և ցածր է, երբ մյուս աչքի տեսողությունը 0,4 է և ավելի կամ մեկ աչքի տեսողությունը 0,3 է, երբ մյուսինը՝ 0,3-0,06 է, գորակոչիկները ժամանակավորապես պիտանի չեն զինվորական ծառայության համար:

Տեսողության հետ կապված տվյալները 2016 թ-ի հուլիսի 18-ին հաստատվել է Մալայանի անվան բժշկական կենտրոնում, սակայն, որի մասին գրավոր եզրակացությունը հրաժարվել են տրամադրել: Այսպիսով, գորակոչիկը ճանաչվել է պտանի զինվորական ծառայությանը՝ սահմանափակումով, որից վերջինս հրաժարվել է:

11. Վ. Մ.

Ձորակոչիկի մոտ ախտորոշվել է «Ուրտիկալ դերմոգրաֆիզմ» չեն որոշվել մեխանիկական ալերգենները:

ԿԲՀ որոշմամբ գորակոչիկը ՀՀ ՊՆ թիվ 410 հրամանի 22-րդ հոդվածի «Դ» կետի համաձայն ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը: ՀՀ ՊՆ թիվ 410 հրամանի 22-րդ հոդվածի I և II սյունակներով փորձաքննվողները «Դ» կետով ճանաչվում են պիտանի, եթե սուր ալերգիկ վիճակը ի հայտ է եկել առաջին անգամ, բուժումից հետո անցել է և չի ուղեկցվել կվինկեի այտուցով, անաֆիլակտիկ շոկով կամ համակարգված ռեակցիաներով: Մինչդեռ գորակոչիկի մոտ ալերգիկ վիճակը խրոնիկ է, իսկ այն առկա է արդեն 4-5 տարի:

«Դ» կետով են փորձաքննվում նաև այն գորակոչիկները և ժամկետային զինծառայողները, որոնց մոտ անհայտ պատճառներից սուր ալերգիկ երևույթները մեկ տարվա ընթացքում ի հայտ են եկել 2-3 անգամից ոչ ավելի, հեշտությամբ անցել են բուժման կուրսից հետո և չեն ուղեկցվել վերը նշված բարդություններով: Մինչդեռ գորակոչիկի մոտ ալերգիկ վիճակը խրոնիկ է, իսկ ալերգիկ երևույթները տեղի են ունենում անընդհատ՝ տարվա մեջ բազմաթիվ անգամ:

Տվյալ պարագայում, հիմք ընդունելով գորակոչիկի բժշկական փաստաթղթերը և առողջության առկա իրավիճակը՝ արձանագրվել է, որ գորաչիկը չէր կարող փորձաքննվել 22-րդ հոդվածի «Դ» կետին համապատասխան, այլ նա տվյալ դեպքում պետք է փորձաքննվեր առնվազն «Գ» կետով, որը ենթադրում է տարկետում պարտադիր զինվորական ծառայությունից մինչև մեկ տարի ժամանակով: Սակայն, գորակոչիկին ճանաչել են պիտանի զինվորական ծառայությանը և գորակոչել:

#### 12. Կ. 3.

Զորակոչիկի մոտ ախտորոշվել է «սրտի ռիթմի և հաղորդականության խանգարում՝ սինուսային հաճախասրտություն, վերփորոքային ռիթմավարի միգրացիա, արագացման-դանդաղեցման դրվագներ, արտահայտված առիթմիա,  $RR \geq 2 RR$ , սինուսային հանգույցի կանգ մինչև 2.44 վրկ, սինո-ատրիկուլյար հաղորդականության ոչ լրիվ պաշարում՝ II աստիճանի, հաճախասրտությունների ժամանակ դիտվել է ST սեգմենտի իջեցում իզոգծից 0.5-1.0-1.5 մմ՝ թեք վեր տիպի և T ատամիկի սրացում: P ատամիկը սրածայր՝ աջ նախասրտի ծանրաբեռնվածություն», «Հիսի խրձի աջ ոտիկի մասնակի պաշարում, PQ ինտրեվալի կարճացում (անցողից բնույթի)՝ 0.11; 0.12; 0.13 մվրկ»: Նա ճանաչվել է պիտանի ՀՀ ՊՆ համանի 26-րդ հոդվածի Դ կետով, սակայն հաշվի առնելով գորակոչիկի բժշկական պատմությունը՝ պարզվում է, որ նա պիտանի չէ զինվորական ծառայությանը ՀՀ ՊՆ 2013 թ. թիվ 410 հրամանի 26-րդ հոդվածի «Գ» կամ Ե կետով հետևյալ հիմնավորմամբ.

1. ՀՀ ՊՆ 2013 թ. թիվ 410 հրամանի 26-րդ հոդվածը նախատեսում է սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները, այդ թվում՝ սրտի ռիթմի և հաղորդականության խանգարումները:
2. Հոդվածի «Գ» կետին են պատկանում SA պաշարումները կլինիկական դրսևորումներով (զինակոչիկը նշում է մի շարք գանգաներ): Հոդվածը չի կոնկրետացնում պաշարումը մասնակի է, թե լրիվ: Հետևաբար, զինակոչիկի մոտ առկա սինո-ատրիկուլյար հաղորդականության II աստիճանի ոչ լրիվ պաշարումը պատկանում է 26-րդ հոդվածի «Գ» կետին:

3. Սինուսային (շնչառական) առիթմիա, հիսի խրձի աջ ոտիկի մասնակի պաշարում ունեցող անձինք ճանաչվում են պիտանի զինվորական ծառայության, Էթե ԷՍԳ-ով չկան ռիթմի և հաղորդականության խանգարման այլ դրսևորումներ: Սակայն, գորակոչի մոտ շնչական առիթմիան և հիսի խրձի աջ ոտիկի մասնակի պաշարումը զուգակցված են ռիթմի և հաղորդականության բազմաթիվ տեսակի խանգարումներով:
4. Եթե առկա են ռիթմավարի միգրացիայի էպիզոդներ, որոնք չեն ուղեկցվում ռիթմի կամ հաղորդականության այլ կայուն խանգարումներով, ապա I սյունակով փորձաքննվողները ճանաչվում են պիտանի սահմանափակումով՝ ըստ «Դ» կետի: Սակայն կրկին, գորակոչի մոտ ռիթմավարի միգրացիայի էպիզոդներ պաշարումը զուգակցված են ռիթմի և հաղորդականության բազմաթիվ տեսակի խանգարումներով: Հետևաբար այս խանգարման մասով կիրառել է ոչ թե «Դ» կետը, այլ «Ե» կետը:
5. Բժշկական փորձաքննության ժամանակ չի որոշվել արյան շրջանառության խանգարման աստիճանը:

ԿԲՀ-ն իր որոշումով գորակոչիկին ճանաչել է սահմանափակումով պիտանի պարտադիր զինվորական ծառայությանը 26 հոդվածի «Դ» կետի համաձայն, ախտորոշում բաժնում գրելով գորակոչիկի մոտ առկա բազմաթիվ խանգարումների մի մասը՝ չներառելով սինուսային հաճախասարտությունը, ռիթմի արագացման-դանդաղեցման դրվագները, AV հանգույցից դուրս թրչող կծկումը, և սինո-ատրիկուլյար հաղորդականության ոչ լրիվ՝ II աստիճանի պաշարումը: Իսկ վերփորոքային ռիթմավարի միգրացիայի էպիզոդը ներկայացվել է որպես եզակի, այն դեպքում, երբ հետազոտման ակտում նշված է «կարճատև», և անգամ եզակի կամ կարճատև լինելը չի նշանակում, որ գորակոչիկը պիտանի է, քանի որ հրամանի 26-րդ հոդվածը քանակային և տևողության սահմանափակում չի դնում: Զորակոչիկը հրաժարվել է գորակոչվել: